ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY

FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«11» 04 2024թ. № 04/12

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ-Ի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 11.04.2024թ-ի զեկուցագրով «Արեգ» ԱԿ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 11.04.2024թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի մարտի 13-ին հայտարարված էլեկտրական գործիքների ձեռքբերման գնման Ընթացակարգի մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արեգ» ԱԿ-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«Արեգ» ԱԿ-ի կողմից ներկայացված.

- դիմում հայտարարության փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ,
- առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 1-ին չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ըստ Ընթացակարգի հրավերի սղոցը պետք է ունենա առնվազն 3900 Վտ հզորության էլեկտրոշարժիչ, իսկ առաջարկվող առարկայի նկարագրում նշված է՝ սղոցի էլեկտրոշարժիչի հզորությունը 2000 Վտ, 3-րդ չափաբաժնի մասով ըստ Ընթացակարգի հրավերի պահանջվում է՝ «Հղկիչը պետք է ունենա հղկափոշու արտազետման համարժեք համակարգ, հղկանիվի արագ և հեշտությամբ փոխելու հնարավորություն, շարժիչը գերբեռնավորվածությունից պաշտպանելու ֆունկցիա, կողային բռնակ, շպինդելի ֆիքսման ֆունկցիա, տարբեր աստիճանի և նյութերի համար

նախատեսված առնվազն 5 հղկասկավառակներ, վթարային ավտոմատ անջատիչ: Շարժիչի հզորությունը՝ առնվազն 1700Վտ, քաշը՝ առնվազն 2 կգ», իսկ առաջարկվող առարկայի նկարագրում նշված է՝ «հղկիչը ունենի կողային բռնակ, շպինդելի ֆիքսման ֆունկցիա: Շարժիչի հզորությունը՝ 1600Վտ Քաշը՝ 1.8 կգ», 5-րդ չափաբաժին մասով ըստ Ընթացակարգի հրավերի պահանջվում է՝ շարժիչի հզորությունը՝ առնվազն 4200 Վտ, լարումը՝ 220-240Վ 50-60Հց, հղկանիվների միջև հեռավորություն՝ առնվազն 30սմ, իսկ առաջարկվող առարկայի նկարագրում նշված է՝ շարժիչի հզորությունը՝ 500 Վտ, լարումը՝ 22050-60Հց:

Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը e-AUCTION համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել «Արեգ» ԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել է արձանագրված անհամապատասխանություններ պարունակող փաստաթղթերը, բայց դրանցում առկա անհամապատասխանությունները շտկված չեն եղել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «Արեգ» ԱԿ-ի հայտը՝ 1-ին, 3-րդ, 5-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների համաձայն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «Արեգ» ԱԿ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի պ/կ-ին՝ «Արեգ» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկվել է «Արեգ» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Արեգ» ԱԿ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար 13.03.2024թ.-ին հայտարարված Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «Արեգ» ԱԿ-ի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արաձանագրվել են անհամապատասխանություններ:
2. Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել «Արեգ» ԱԿ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով ՀՀ

կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

3. Հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել է արձանագրված անհամապատասխանություններ պարունակող փաստաթղթերը, բայց դրանցում առկա անհամապատասխանությունները շտկված չեն եղել:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի պ/կ Հ. Զաքոյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝

«Արեգ» ԱԿ-ի կողմից «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար 13.03.2024թ.-ին հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«Արեգ» ԱԿ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արաձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող հանձնաժողովը նիստը կասեցրել է 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել է «Արեգ» ԱԿ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Արեգ» ԱԿ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Արեգ» ԱԿ-ը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Արեգ» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «Արեգ» ԱԿ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Արեգ» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	**որպես ընտրված մասնակից** հրաժարվել կամ **զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից**	
«Արեգ» ԱԿ	05007719	ք. Երևան, Տիգրան Մեծի 1	X			11.04.2024թ. ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/3

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ՝ **Հ. ԶԱՔՈՅԱՆ**